

Արձանագրություն թիվ 1

02.02.2012թ.

գ. Արփունք

Տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արփունք համայնքի ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցում էին համայնքի բնակիչները, ավագանու անդամները, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Գրիգորյանը:

Ժողովի նախագահ՝
Քարտուղար՝

Ս.Ղազարյան
Մ.Հովհաննիսյան

Օրակարգ-Արփունք համայնքի ղեկավար Ս. Ասլանյանի հաշվետվությունը 2011թ կատարված աշխատանքների մասին:

Զեկուցողը մանրամասնորեն ներկայացրեց Արփունք համայնքում 2011թ. ընթացքում կատարված աշխատանքների մասին հաշվետվություն:

Հաշվետվությունում վերհանվեց համայնքի սոցյալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու կողմից ձեռնարկված միջոցառումները, ինչպես համայնքի բյուջեի կատարման, այնպես էլ համայնքի առկա խնդիրների լուծման ուղղությամբ:

/ Համայնքի ղեկավարի հաշվետվությունը կայքում է/

Հաշվետվության շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին համայնքի ավագանու անդամները, բնակիչները: Հաշվետվության շուրջ հանդես եկավ մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Գրիգորյանը:

Համայնքի բնակչության կողմից առաջարկվեց համայնքի ղեկավար Ս. Ասլանյանի կողմից կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Համայնքի ընդհանուր ժողովը որոշեց՝

1. Համայնքի ղեկավար Ս Ասլանյանի 2011թ. կատարած աշխատանքների վերաբերյալ տրված հաշվետվությունը գնահատել բավարար:
2. Պահանջել համայնքի ղեկավար Ս. Ասլանյանից և գյուղապետարանի աշխատակազմից 2012թ. ընթացքում իրենց գործունեությունը նպատակաուղղել համայնքում առկա հիմնախնդիրների լուծման և համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման ամբողջական կատարման և այդ մասին պարբերաբար իրազեկել պահել համայնքի ավագանու և բնակչությանը:
3. Ապահովել համայնքի սոցյալ- տնտեսական զարգացման քառամյա ծրագրի նախատեսված հիմնախնդիրների իրականացումը:

Ժողովի նախագահ՝
Քարտուղար՝

Ս.Ղազարյան
Մ.Հովհաննիսյան

Հաշվետվություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Արփունք համայնքի ղեկավար Ս. Ասլանյանի 2011թ. Կատարած աշխատանքների մասին:

Հարգելի համագյուղացիներ, ավագանու անդամներ, հյուրեր Ձեզ եմ ներկայացնում 2011թ. իմ կողմից Արփունք համայնքում կատարած աշխատանքների և բյուջեի կատարման մասին հաշվետվություն:

Արփունք համայնքը կազմված է 143 ծխից և ունի 658 բնակիչ, որոնց շուրջ 90%-ը վերաբնակեցված են:

Ղեկավարելով “Տեղական ինքնակառավարման մասին “ և “Համայնքային ծառայության մասին “

Հայաստանի Հանրապետության օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, համայնքի ավագանու և գյուղապետարանի կանոնադրությամբ և ընդունված որոշումներով համայնքի ՏԻՄ մարմինները իրենց գործունեությունը 2011թ. հիմնականում նպատակաուղղել է համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծմանը, ինչպես նաև համայնքում առկա սոցյալ տնտեսական խնդիրների որոշմանը բարելավման հարցերին:

Չնայած 2011թ. համայնքում չի ներդրվել որևէ խոշորամասշտաբ ծրագիր և համայնքին չի ցուցաբերվել համապատասխան աջակցություն համայնքում առկա հիմնախնդիրների լուծմանը, որոնք նախատեսված էին համայնքի սոցյալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրով, այնուամենայնիվ համայնքի սուղ միջոցներով կատարվել են մի շարք աշխատանքներ, բնակչության և գյուղապետարանի աշխատակազմի կողմից մասնակիորեն բարեկարգվել են համայնքի խմելու և ոռոգման ցանցերը, վերացվել առաջացած խափանումները, մասնակիորեն քարտեզագրվել են համայնքային և միջդաշտային ճանապարհները կատարվել հարթեցումներ և փոսալցումներ:

Տարվա ընթացքում համայնքի բյուջեի միջոցներից համայնքի անապահով ընտանիքներին հատկացվել է շուրջ 100.000 (հարյուր հազար) դրամի օգնություն, համապատասխան դրամական աջակցություն է ցուցաբերվել երկրապահ կամավորականների ընտանիքներին: Տարվա ընթացքում կազմակերպվել և անցկացվել է մի շարք միջոցառումներ կապված անկախության օրվա, Հայոց բանակի կազմավորման, հայրենական պատերազմի և Արցախի ազատագրման, կանանց միջազգային օրվա ամանորյա տոների անցկացման հետ: Այդ նպատակներով հատկացվել է շուրջ 100.000(հարյուր հազար) դրամ:

Չնայած կատարված աշխատանքներին համայնքում դեռևս առկա են բավականին հիմնախնդիրներ, որոնց լուծումը համայնքի միջոցներով դեռևս հնարավոր չէ և այդ ուղղությամբ անհրաժեշտ է վերադաս կազմակերպությունների օգնությունն ու աջակցությունը:

Խիստ անմխիթար վիճակ են համայնքի խմելու և ոռոգման ցանցերը, որոնք ունեն ամբողջական հիմնանորոգման կարիք, անբարեկարգ են գյուղամիջյան և ներհամայնքային ճանապարհները, կիսավթարային վիճակում է գտնվում էլեկտրահաղորդալարերը և հենասյունները, հաճախակի խափանումները: Գյուղը գազաֆիկացված չէ, չի գործում ակումբ-գրադարանը, մանկապարտեզը, չունի կենցաղի և մշակույթի տուն, անբարվոք և կիսավթարային վիճակում է գտնվում գյուղապետարանի շենքը, որում տեղակայվել են կապի բաժանմունքը և գրադարանը: Բավարար չէ տրանսպորտային կապը Վարդենիս քաղաքի հետ ավտոբուսային երթևեկությունը իրականացվում է 2 օրը մեկ, առկա առևտրի երկու կրպակները չեն ապահովում բնակչության առօրյա կարիքները:

Համայնքում լուրջ հիմնախնդիր է համարվում բնակչության զբաղվածության ապահովումը, գյուղում չի գործում որևէ արտադրամաս կամ աշխատանքի օբյեկտներ, որը և պատճառ է հանդիսանում երիտասարդության գյուղում չմնալուն: Տարվա ընթացքում չի կառուցվել որևէ նոր բնակարան, տարվա ընթացքում եղել է ընդամենը 7-ը ծնունդ, համայնքը գտնվում է ծերացման լուրջ վտանգի տակ:

Գյուղում գործում է մեկ միջնակարգ դպրոց՝ թվով 101 աշակերտ, 1-ին դասարանում սովորում են 7, իսկ ավարտական դասարանում՝ 9 աշակերտ: Դպրոցում ընդգրկված են 21 աշխատողներ:

Համեմատած բարվոք վիճակում է գյուղի բուժ-ամբուլատոր կետը որում աշխատում են 2 բուժքույրեր: Գյուղապետարանի աշխատողները բաղկացած են 6 հոգուց, կապի բաժանմունքում աշխատում է 1 մարդ: Բնակչության մեծամասնությունը զբաղված է անասնապահությամբ և դաշտավարությամբ:

Համայքը ունի շուրջ 954,0 հա վարելահողեր, 220,0 հա արոտներ, տնամերձը կազմում է 60,3 հա, հիմնականում մշակվում է հացահատիկային և կերային կուլտուրաներ, արտադրվում է պտուղ բանջարեղեններ (միրգ, կարտոֆիլ և այլն): Սակայն հարկ են համարում նշել, որ 2011 է. Խիստ անբարենպաստ եղավ գյուղացիների համար, տարվա ընթացքում տեղացած կարկտահարությունից և ուժեղ քամիներից զգալիորեն տուժեց հացահատիկային մշակաբույսերը և պտուղ բանջարեղենի ցանքատարածքները: Այդ մասին իրազեկվել է համապատասխան ատյաններին, ստեղծվել հանջնաժողովներ, կազմել համապատասխան ակտեր և ներկայացվել պետական մարմիններին պատճառված վնասների հատուցման և գյուղացիներին աջակցման նպատակով, սակայն առայսօր այդ ուղղությամբ ոչ մի աջակցություն չի ցուցաբերվել: Եվ ստեղծված իրավիճակից ելնելով բնակչության մեծամասնությունը չկարողացան պատշաճ վերարտադրություն ապահովել, ինչպես նաև չկարողացան ժամանակին և ամբողջական կատարել իրենց հարկային պարտականությունները, որով և թերացվեց 2011 թ. բյուջեի սեփական եկամուտների կատարումը:

Այսպես նախապես նշված եկամուտները պլանավորել 12740,0 հազար դրամի փոխարեն մուտքագրվեց 11419,2 հազար դրամ, կամ կատարվեց 89,6% -ով, այդ թվում

սեփական եկամուտները նախատեսված 3873,3 հազար դրամի դիմաց կատարվեց 3143,0 դրամով կամ 81,1% ով, թերակատարվեց հողի հարկի և հողի վարձավճարի հավաքագրումը: Որոշակի դրական առաջընթաց ապահովվեց գույքահարկի գանձման ուղղությամբ, այն կատարվեց 143,3% ով:

Բյուջեի 2011թ. ծախսերը ունեն հետևյալ պատկերը՝ նախատեսված 12740,0 հազար դրամի դիմաց ծախսվել է 11762,0 հազար դրամ կամ 92% ով: Որից աշխատավարձինը՝ 917,0 հազար դրամի դիմաց հատկացվել է 897,1 հազար դրամ կամ 630,0 հազար դրամի դիմաց 441,0 հազար դրամ կամ 70,0% ով:

Տարվա ընթացքում կայացել է համայնքի ավագանու 10 նիստ և կայացվել համայնքի ղեկավարի 19 որոշումը, որոնք հիմնականում վերաբերվել են համայնքի հիմնախնդիրների լուծմանը, բյուջեի կատարմանը, բնակչության սոցյալ-տնտեսական կարիքների բարելավմանը և գյուղապետարանի աշխատանքների բարելավմանը, սակայն դեռևս առկա են որոշումների կայացման ապահովման, դրանց վերահանման ու իրականացման, բնակչության կողմից ներկայացված դիմում բողոքների և պահանջների բավարարման ուղղությամբ բացթողումները և թերությունները:

Ելնելով կատարված աշխատանքներից և առկա բացթողումներից հավաստիացնում են համայնքի բնակչությանը, համայնքի ավագանուն, որ 2012թ. անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն համայնքում առկա հիմնախնդիրների լուծման, բյուջեի սեփական եկամուտների ապահովման գյուղապետարանի աշխատակազմի աշխատանքների բարելավման և պատասխանատվության բարձրացման ուղղությամբ:

Արփունք համայնքի
Ղեկավար՝

Ս. Ասլանյան